



Արմեն Աշմատի Հակոբյանը ծնվել է 1976 թվականի մարտի 18-ին Երևան քաղաքում:

1998-ին գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական ժողովրդական տնտեսության ինստիտուտը՝ «Հաշվապահական հաշվառում և աուդիտ» մասնագիտությամբ: Այնուհետև կրթությունը շարունակել է նույն ԲՈՒՀ-ի ասպիրանտուրայում և, 2001-ին պաշտպանելով թեկնածուական ատենախոսություն, ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:

2004-ին Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ ստացել է դոցենտի գիտական կոչում:

2012 թվականի հուլիսին պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Վարձակալություն. հաշվառման և ֆինանսական կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով, և ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի մասնագիտական խորհրդի որոշմամբ Արմեն Հակոբյանին շնորհվել է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան:

2019 թվականի դեկտեմբերին ստացել է պրոֆեսորի գիտական կոչում:

1998 թվականից դասավանդում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում «Հաշվապահական հաշվառում բանկերում», «Ֆինանսական հաշվառում» և այլ մասնագիտական առարկաներ: Արմեն Հակոբյանը հանդիսանում է ՀՊՏՀ 014 տնտեսագիտական խորհրդի անդամ, ինչպես նաև Հաշվառման և ֆինանսների վերաբերյալ 60-ից ավելի գիտական հոդվածների, ձեռնարկների և մենագրությունների հեղինակ:

Համաձայն ՀՀ ԿԲ-ի կողմից տրված վկայականների՝ ունի բանկի և օտարերկրյա բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահի, գլխավոր հաշվապահի տեղակալի, ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ֆոնդի կառավարչի պաշտոններում աշխատելու իրավունք:

Մասնակցել է որակավորման բարձրացման տարբեր դասընթացների ՀՀ-ում,
Լիբանանում, Նիդեռլանդներում, Չեխիայում, Ֆրանսիայում և Մեծ Բրիտանիայում:

19.05.1998-ից աշխատել է «Հայգյուղփոխբանկ» կոոպերատիվում՝ ներկայիս «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ՝ զբաղեցնելով հետևյալ պաշտոնները. 19.05.1998-03.01.2000-ը հաշվապահ, 03.01.2000-26.04.2002՝ ավագ հաշվապահ, 26.04.2002-20.01.2003՝ ներքին աուդիտի պատասխանատու, 20.01.2003-17.02.2003՝ Ներբանկային գործառնությունների բաժնի պետ, 17.02.2003-17.03.2003 գլխավոր հաշվապահի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար, 17.03.2003-13.12.2006 գլխավոր հաշվապահի տեղակալ (09.09.2006թ. վերանվանված «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ): 01.05.2003-31.12.2013թ.-ը համատեղությամբ աշխատել է «ԱԳԲԱ Լիզինգ» ԼՎԿ-ում որպես գլխավոր հաշվապահ:

13.12.2006-27.02.2007-ը հանդիսացել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի գլխավոր հաշվապահի ժամանակավոր պաշտոնակատարը, 27.02.2007-20.07.2015-ը՝ գլխավոր հաշվապահի տեղակալ: 08.01.2014-09.02.2016թ.-ը համատեղությամբ աշխատել է «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ում՝ զբաղեցնելով գլխավոր հաշվապահի պաշտոնը:

20.07.2015-ից Արմեն Հակոբյանը նշանակվել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի գլխավոր հաշվապահ:

Ամուսնացած է: